



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

<< ----->> << ----->> 2021թ.

N -----

**<<Հետաքննող լրագրողներ>> ՀԿ-ի  
<<Հետք>> թերթի լրագրող Գրիշա Բալասանյանին  
E-mail: grisha.balasanyan@hetq.am**

**Հարգելի պարոն Բալասանյան**

Ի պատասխան Ձեր 2021 թվականի նոյեմբերի 8-ի գրությամբ տրված հարցման, տեղեկացվում է, որ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանում վերջին անգամ մարզի խորհրդի նիստ կայացել է 2020 թվականի հունվարի 30-ին (կցվում է օրակարգը) :

2. Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համաճարակով պայմանավորված, մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի N 1514-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում սահմանված իրավական ռեժիմի ավարտը, դադարեցված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 647-Ն որոշմամբ սահմանված մարզի խորհրդի կազմավորման և գործունեության կարգի 4-րդ կետի պահանջի համաձայն առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ մարզպետի կողմից մարզի խորհրդի նիստերի հրավիրման և անցկացման գործընթացը:

3. Սույն գրության 2-րդ կետում նշված հիմքով 2020 թվականի հունվարի 30-ին կայացած մարզի խորհրդի նիստից հետո նոր նիստեր չեն կայացել, ուստի մարզպետարանի կայքէջում որևէ հայտարարություն չի հրապարակվել:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

**Գլխավոր քարտուղար,  
քաղաքացիական ծառայության  
երկրորդ դասի պետական խորհրդական՝**

**Ա.Հովհաննիսյան**

10.11.2021

VERIFIED OCSP 10.11.2021 14:16:02 GMT+4

Կատ՝ Դ. Դավթյան  
Հեռ. 0237/2-08-56/

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2020  
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի ՆԻՍՏԻ**

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝

Կ. Գրիգորյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի  
գլխավոր քարտուղարի  
պաշտոնակատար՝

Վ. Վարդազարյանի

ՀՀ Արմավիրի մարզային փրկարարական  
վարչության պետ

Հ. Մարգարյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի  
կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

Լրարվամիջոցների ներկայացուցիչների

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. ՀՀ Արմավիրի մարզի խորհրդի 2020 թվականի հունվարի 30-ի նիստի օրակարգը  
հաստատելու մասին:

/Հ. Մաթևոսյան- ՀՀ Արմավիրի մարզպետ/

2. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի  
մարզային փրկարարական վարչության 2019 թվականի գործունեության վերաբերյալ  
հաշվետվության ներկայացում:

/Հ. Մարգարյան- ՀՀ Արմավիրի մարզային  
փրկարարական վարչության պետ/

3. ՀՀ Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման և  
համայնքապետարաններում աշխատավարձի գծով առաջացած պարտավորությունների  
կատարման գործընթացը առ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

/Վ. Մկրտչյան- ՀՀ արմավիրի մարզպետարանի  
ֆինանսական և  
սոցիալ-տնտեսական  
զարգացման վարչության պետ/

4. ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում 2019 թվականի ընթացքում տնտեսական և  
սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման  
արդյունքների և 2020 թվականի սուբվենցիաների տրամադրման հայտերի ներկայացման  
ընթացքի մասին:

/Լ. Մուշեղյան- ՀՀ Արմավիրի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և  
վերլուծության բաժնի պետ/

**5. Գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պեպրակային աջակցության ծրագրերի վերաբերյալ իրազեկում:**

*/Իռա Փանոսյան- ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչ/*

**6. Հայտարարություններ՝**

- **<<Անուշ-Արմենիա>> ընկերության կողմից գյուղատնտեսական արտադրանքի մթերումների վերաբերյալ:**

*/Հ. Մաթևոսյան- ՀՀ Արմավիրի մարզպետ/*

- **2020 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում իրականացվելիք <<Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսություններին աջակցության տրամադրման>> ծրագրի վերաբերյալ:**

*/Հ. Մաթևոսյան- ՀՀ Արմավիրի մարզպետ/*

- **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների լիցենզավորման գործընթացի վերաբերյալ:**

*/Հ. Մաթևոսյան- ՀՀ Արմավիրի մարզպետ/*